



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ Ն ի տ է ս ա կ յ ա ն ե շ Բ ն յ ա կ յ ա ն

ԳԻՏԵԼԵԱՅ

ԺԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 19.

1854

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Էյեռնորա Անգղիոյ րագուհին :

Երբ որ Լոնդոնի քաղաքացիները, որ Սկոթլանդի ու Վալեսի տիրելով մեծ ահուկ հանեց, արքունի գահը ժառանգելէն առաջ Վաղղիացւոյ Լոնդոնի վիկոս Թ. Թագաւորին յորդորելով ինքն ալ Վաղղիաց կարգը մտաւ, որոնց վախճանն էր սուրբ երկիրը անհաւատից ձեռքէն խալըսել: Ուստի պղտիկ բանակի մը գլուխն անցած Լոնդոնի վիկոս անցաւ. հոն գտաւ Վաղղիոյ բանակը, որ իր սք. Թագաւորին մահաւորաժամէ զարնուիլը կ'ողբար: Լոնդոնի քաղաքացիները անգարմանեւ կորուստը տեսնելով չքաւ ամենեւին. վաղեց սուրբ եր-

կիրը, ազատեց Լոնդոն անհաւատից ձեռքէն, կոտորեց ցրուեց թշնամին ու հասաւ Վաղղի, և իր բոլոր բոլոր վեց հազար զօրքով սարսափեցուց զամենքը: Սարակինոսները տեսնելով որ Լոնդոնի քաղաքացիները հետ գլուխ ելլելը իրենց բանը չէ՝ վատութեամբ ուղեցին ձեռքէն ազատիլ: Տաճկին մէկը մեծ վարձքի խոստմունքն առնելով յանձն առաւ խարդախութիւն գործքը գլուխ հանել. ու Վաղղի մը թղթաբերը ձեռնալով ստէպ ստէպ անկէ թղթեր կը բերէր Լոնդոնի քաղաքացիները, որոնց մէջ էմիրը կը խոստանար տաճիկութիւնը թողուլ ու բերի-

տոնէական կրօնից դառնալ, ճշմարտութիւնը ճանչցած ինքըզինքը ձեւացրնելով: Երբեք իր վեհանքն սրտովը չկասկածեցաւ ամենեւին թշնամոյն նենգութեանը վրայ, ու մեծ սիրով կ'ընդունէր զինքը: ()ը մը երբ առանձին կեցած կը խօսակցէին, յանկարծակի քաշեց տաճիկը իր թոյն քսած սուրը ու զարկաւ վիրաւորեց զքաջ զօրապետը: Եւ թէպէտ իր ըրած նենգաւոր գործոյն շուտով պատիժը գտաւ, բայց իշխանին կեանքն ալ մեծ վտանգի մէջ էր:

Երբեք չէր հետ մէկտեղ եկած էր նաև իր Ելենորա ամուսինը, Կասդի լիոյ իշխանուհին, որ իր գեղեցկութեանը հետ զարմանալի առաքինութեամբ ալ կը փայլէր: Երբ յուսահատ ողբով կու լար երկանը վրայ, սարակինոս աղա խին մը իրեն խմացուց, որ եթէ մէկը կարենայ այնչափ սիրտ ընել՝ որ իշխանին վերքի թոյնը ծծէ, կրնայ մահուանէ խալտել զանիկայ՝ թէպէտ և ինքը մեծ վտանգի մէջ կ'ընկնայ: Եւս որ լսեց Ելենորա, միտքը դրաւ իր կեանքը զոհել ամուսնոյն սիրոյն համար. ու երբ անիկայ թմրութեան մը մէջ անզգայ ինկեր էր, քովը եկաւ, ու վերքը բանալով՝ դիւցազնական քաջութեամբ մը ծծեց այն մահաբեր թոյնը:

Եկէն տարածեցաւ բանակին մէջ իշխանուհւոյն ցուցուցած առաքինութիւնը. ամենքը կը հիանային կը գովէին իր աննման սէրն ու ճշմարիտ առաքինութիւնը, և կ'ողբային միանգամայն՝ որ իր սիրոյն զոհ պիտի ըլլար այս պիսի չքնաղ ու անգիւտ մէկ սիրտ մը: Եւս իսկ սարակինոս աղախինը զարմացաւ մնաց իր տիրութեան վրայ, ու սքանչանալով միանգամայն այն Երօնից վրայ, որ տկար կանանց անգամ սրտերը այնպիսի քաջութեամբ կ'ամրացնէ՝ վաղեց իշխանուհւոյն ու դեղձափ մը տուաւ, որ միայն արևելոց ծանօթ էր կ'ըսէ պատմութիւնը: Եւս զայն Ելենորա, ու աչուրները ի կեանս բացաւ. և կրցաւ դարձեալ իր սիրալիր խնամքներովը ամուսնոյն քովը ծառայել:

Շատ չանցաւ առողջացաւ Երբեքը ալ, ու Երբեքը դառնալով իր հայրենեացը նոր նոր փառքեր ստացաւ: — Եւս կերպով կնոջ մը ձեռքով իշխանի մը կեանքը ազատեցաւ, ու հայրենեաց ապագայ փառքն ու մեծութիւնը պատրաստուեցաւ, և նորաստան առաքինութեան ալ օրինակ մը աւելցաւ աշխարհի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆՍՈՍՈՒԹԻՒՆ

Հին Պարսեզներու վրայ: (Երես 230)

Երբեք մասին մէջ խօսեցանք Պարսից, Զոռնաց, Զինաց և ուրիշ քանի մը ազգաց պարտէզներու և մշակութեան ունեցած ախորժակին վրայօք. գանք հիմա Հռովմայեցւոց:

Պարսիցաց ու երկրագործութեան մեծ խնամք կը տանէին Հռովմայեցւոց թագաւորները: Տարկուինիոս Վոռոզն պետութեան բարձրագոյն հրամանները իր պարտիզին պալատէն կը ղըկէր: Երկրագործութեան սկիզբը շատ հին է Հռովմայեցւոց մէջ, և շատ առաջ տարած են, ինչպէս նաև Պլինիոսի պատմածներէն յայտնի կ'երևայ: Եւս, Հռովմայեցւոց առաջին թագաւորներէն մէկը, սաստիկ պատասխանատուութիւն կը պահանջէր երկրագործներէն. նոյնպէս Երբեք, որ չորրորդ թագաւորն է Հռովմայ, կը պատուիրէր ժողովրդեան՝ որ մեծ փոյթ ունենան մշակութիւնը առաջ տանելու: Եւ Պլինիոս Հռովմայեցի զօրավարաց համար այսպէս կ'ըսէ, որոնք երկիր կը մշակէին. «Եւս ինքաբար էին. — Օ՛ր զօրավարացն ձեռք մշակեալ լինէին յայնժամ անդաստանք, և երկիր բերկրէր իմն գոգցեա պսակազարդ խոփովն և յաղթող արօրադրաւ. զի կամ նովին քաջութեամբ սերմանէին, որով պատերազմէին, կամ նովին ժրութեամբ դործէին զերկիր, որով ճակատ յարդարէին, և կամ